ԱՒԱՐԱՅՐԻ ԴԻՒՑԱԶՆԵՐԸ

ԹԱՏԵՐԱԽԱՂ

ՉՈՐՍ ԱՐԱՐՈՎ

(Շար. և վերջ Բազմ. 1951, թիւ 10–11, էջ 275)

ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

Թատերաբեմը կը ներկայացնէ Մարզպանական ամրոցը, որու մէկ կողմէն կը տեսնուի Արտաշատի մաս մը. կամաց կամաց տեսարանը կը մթննայ, գիշերը կը մօտենայ, երկինքի վրայ երբեմն փայլակներ կը լուսաւորեն անձիները:

ՏԵՍԻԼ Ա·

ՎԱՍԱԿ, ՈՒՐՈՒԱԿԱՆ ՄԸ, ԱՐՏԱՓԵՌՆԷՍ, ԳՈՒԺԿԱՆ ՄԸ:

Վասակ. – Սո՛ս, Արտափեռնէս կու գայ...: Դեռ աղօթարանը բացուած չէ, սրտիս պէս մութ է գիշերը: Ամրոցին մէջ ամէնքը խաղաղ կը քնանան: Ո՜հ, ո՞վ է որ հոս կ'երեւի: Ո՞վ ես... ոգի՞ մը, թէ մարմին ալ ունիս: Վրա՞ս կը խոյանայ...: Ո՞վ ես դու... Արհմնի դեւերէ՞ն, թէ Որմիզդի հրեշտակներէն:

Ուրուական. – Հայաստանի Ոգին... Վասակ...:

Վասակ. – Ի՞նչ կ'ուզես ինծմէ...:

Ուրուական. – Եկայ ըսելու, թէ պիտի տեսնես զիս անգամ մը եւս Տիզբոնի բանտերուն մէջ:

Վասակ. – Ուրիշ անգամ մըն ալ պիտի երեւնա՞ս:

Ուրուական. – Այո՛, Տիզբոնի բանտերուն մէջ...:

Վասակ. – Հայաստանի ոգի, դալկահար և արիւնաթաթաւ... Տիզբոնի բանտերուն մէ՞ջ... տեսնել քեզ...: Երբ պիտի ունենամ Վարդանի քաջութիւնը... չարագուշակ ոգի... արիւնս սառեցուցիր... Ինչո՞ւ ինծի չըսիր որ զիս պիտի տեսնես Հայաստանի Գահուն վրայ...: Արտափեռնէս, օ՛ն արթնցիր, արթնցի՛ր. կու գա՞ս ուրեմն Արտափեռնէս:

Արտափեռնէս. – Տէր Մարզպան: (ուժգին աղաղակ):

Վասակ. – Ո՞վ արձակեց այն զարհուրելի աղաղակը, որ օդը պատռեց և սիրտս ծակեց:

Արտափեռնէս. – Աղաղա՛կ... Տէր Մարզպան...:

Վասակ. – Այո՛, զարհուրելի աղաղակ...:

Արտափեռնէս. – Ո՛չ, տէր իմ, ես բան մը չլսեցի:

Վասակ. – Արտափեռնէս, սուրհանդակը Ապահունիքէն հասնելուն պէս լուր տուր ինծի:

Արտափեռնէս. – Մարզպանի հրամանը գլխուս վրայ: (կը մեկնի):

Վասակ. – Ո՛չ, պէտք չէ որ քայլերուս վրայ ետ դառնամ: Նախանձորդս հսկայ մըն է. պէտք է որ տապալեմ, Մա–մի–կո–նեան...:

Արտափեռնէս. – (մօտենալով) Տէր, հասաւ սուրհանդակը, կնքուած նամակով մը ձեռքին մէջ:

Վասակ. – Դարձի՛ր և քնացի՛ր. (ետ կանչելով) Արտափեռնէս, ամրոցին մէջ բարեկամ նախարարներ մտա՞ն:

Արտափեռնէս. – Ո՛չ, Տէր Մարզպան:

Վասակ. – Գնա՛, եթէ հասնելու ըլլան անոնք՝ եկո՛ւր ինծի իմացուր:

Արտափեռնէս. – Իշխանական հրամանը գլխուս վրայ: (կը մեկնի):

Վասակ. – Յաջողեցայ ազգը ապերախտութեամբ հայրենիքէն ու խաչէն բաժնել, ուրացողներու թիւը կ'աճի օր օրին: Չարկ է մաս մըն ալ բռնութեամբ բերել ատրուշաններու առջեւ...: Չարուածէ՛, զա՛րկ Վասակ, պիտի յաջողիս...:

Արտափեռնէս. – (մօտենալով) Տէր Մարզպան, սուրհանդակ մը հասած է և կը խնդրէ որ փշտիպաններու գունդը Մոգպետին օգնութեան հասնի:

Վասակ. – Ի՞նչ կը նշանակէ այդ: (դուռը կը զարնուի) Տես ո՛վ է: Զինարկս մեծ և յանդուգն է. եթէ անակնկալ բաներ պատահելու ըլլան՝ գլուխս սուրի պիտի դրուի: Կը ճանչնամ Յազկերտը... խորամանկութեան բոլոր զէնքերով զինուած պիտի կանգնիմ անգութ ճակատագրին առջեւ:

Արտափեռնէս. – Տէր Մարզպան, գուժկան մըն է դրան առջեւ որ կ'ուզէ քեզ տեսնել:

Վասակ. – Ներս մտցուր: (մինակ) Ինչո՞ւ հայրենիքի դէմ դաւաճանութիւնը այսպէս կը ցնցէ մարդը. եղեռնի պատիժը մէջն ունի...:

Գուժկան. – Ո՜հ, սոսկալի... սոսկալի... սոսկալի...:

Վասակ. – Ի՞նչ է այդ... ինչո՞ւ շնչասպառ կը հասնիս, ինչո՞ւ է սարսափդ:

Գուժկան. – Մահը դէմ առ դէմ տեսայ... (պոռալով, սարսափած) Հայաստան բոց կ'արձակէ:

Վասակ. – Խօսէ՛, խօսէ՛, ի՞նչ տեսար...:

Գուժկան. – Թող աչքերս կուրնային... Վարսագեղ ծերունի մը, կրակ ու բոց աչքերով, յանկարծ ձեռքը օդին մէջ բարձրացուց, ժողովուրդը գոռաց և առիւծաբար...:

Վասակ. – Ղեւոնդ վանանդացին է այն... անիծեալ ծեր...:

Գուժկան. – Ժողովուրդը գոռաց ուժգին, և գազանաբար մոգերու վրայ խուժեց, քարերու տեղատարափ անձրեւով անոնց գլուխները փշրեց:

Վասակ. – Մոգպետին վնաս մը հասա՞ւ արդեօք:

Գուժկան. – Վիրաւոր հազիւ կրցաւ փախչիլ:

Վասակ. – Հապա ի՞նչ եղաւ մոգերու օգնական բանակը:

Գուժկան. – Մոգերու հետ քարկոծուեցաւ, և փախաւ...:

Վասակ. – Գուժկան, ետ դարձիր, մեկնէ իսկոյն, հասի՛ր Մոգպետին քով, լուր տուր իրեն զուարթերես, որ Հայաստանի միութիւնը խորտակած եմ. չվհատի. Միհրը հետդ ըլլայ:

Գուժկան. – Ծառայ եմ հրամանիդ: (կը մեկնի):

ՏԵՍԻԼ Բ·

ՎԱՍԱԿ, ԱՐՏԱՓԵՌՆԷՍ·

Վասակ. – Գիտէի... գիտէի որ Հայերը փշեղէն խուրձի մը կը նմանին, և թէ Զրադաշտի մոգերը պիտի չկարենան գրկել զանոնք առանց արիւնոտելու...: Ապիկար և դասալիք պարսիկ, Հայու սուրը չտեսած կը փախչիս...:

Արտափեռնէս. – Տէր Մարզպան, Բագրատունեաց Տիրոց իշխանը ամրոցն է և կ'ուզէ քեզ տեսնել:

Վասակ. Մինա՞կ է...:

Արտափեռնէս. – Ոչ, Տէր Մարզպան, երեք ուրիշներու հետ է, կը խօսակցին:

Վասակ. – Ամէնքն ալ ծանօթ դէմքե՞ր են:

Արտափեռնէս. – Ո՛չ, Տէր:

Վասակ. – Թող ներս գան:

ՏԵՍԻԼ Գ·

ՆՈՅՆԵՐԸ և ՏԻՐՈՑ, ԳԱՏԻՇՈՅ, ԶԱՆԴԱԶԱՆ, ԱՐՄԱԻԴԻ, (գլուխը փաթթած):

Տիրոց. – Ողջո՜յն, Վասակ իշխան, կը կարծէի թէ կը հանգչիս. բայց ինչո՞ւ դէմքդ մահուան պէս տժգոյն է:

Վասակ. – Ուրուականներու հետ կ'ապրիմ... ուղեկիցներդ ծանօ՞թ անձինք են:

Տիրոց. – Բոլորն ալ, արեգակին ծունր դնողներէն..., (Զանդազան, Գատիշոյ և Արմաիդի):

Վասակ. – Բարի եկաք բարեկամներ, այս աղետաւոր գիշերը մեզ պիտի անմահացնէ:

Գատիշոյ. – Շանթի բոցերուն առջեւ ուխտենք մեր ծրագիրները գործադրել:

Զանդազան. – Բազմաթիւ են մեր հակառակորդները... նախ զո՞վ մէջտեղէն պէտք է վերցնել:

Վասակ. – Ինչ որ ծրագրեցինք Յազկերտի խոստումով՝ գլուխ պիտի ելնէ անպատճառ:

Տիրոց. – Ապահո՞վ ես:

Վասակ. – Այո՛, սակայն պէտք է որ նախ Հայերուն սրտին մէջ խաչին տեղ Որմիզդը բազմի:

Զանդազան. – Կը յուսա՞ս:

Վասակ. – Պիտի յուսամ ամէն յոյսի դէմ:

Արմաիդի. – Վասակ, վիրաւորուած գլուխս՝ երազդ օդը պիտի ցնդէ:

Վասակ. – Համբերէ՛, քիչ մը եւս Մոգպետ, և պիտի տեսնես մեր յաղթանակը: (ցաւի ձայներ): Ինչո՞ւ ամբոխը այդպէս կ'աղաղակէ:

Գատիշոյ. – Յազկերտի և մեր դէմ եղած զայրոյթը դեռ կը շարունակուի:

Զանդազան. – Պատերա՛զմ. երբ պատերազմի ձայնը կը լսէի առաջ՝ ուրախութեամբ կը թնդար սիրտս, բայց այժմ կը դողամ:

Տիրոց. – Նոյն իսկ Հայերու անչափահաս որդիները զինուոր դարձեր են. այդ ծեր Հայաստանը յանկարծ առոյգ որդիներ ծնաւ:

Վասակ. – Եւ այդ դիւցազներուն իշխողն է ատելի Մամիկոնեանը, ան Հայաստանի կուռքըն է:

Գատիշոյ. – Հայ ժողովուրդը կը գոռայ մեզի դէմ:

Արմաիդի. – Հայո՛ց իշխաններ, թոյլ տուէք որ գրեմ արքայից արքային, թէ անհնար է բըռ-

նութեամբ Հայաստանի մէջ Միհրի պաշտամունքը հաստատել։

Վասակ. – Համբերէ՛ մոգպետ, Հայաստանի թագը զոհողութիւններով միայն կարելի է ժառանգել։

Տիրոց. – Կորսուած ենք, Վարդան յաղթական բանակներով Կովկասէն կը վերադառնայ ահա, ժողովուրդը խանդավառ կ'առաջնորդէ զանոնք Արտաշատի մայր տաճարը։

Զանդազան. – Ի՞նչ պիտի ըլլայ այսօր մեր բախտը, փրկութի՞ւն թէ կորուստ։

Արմահիդ. – Վասակ, եւ կեցիր այդ մահաբեր ճամբէն, ապա թէ ոչ քու ազգիդ արդար արիւնը գլխուդ վրայ պիտի թափուի։

Վասակ. – (առանձին) Գացէք ծածկուեցէք, թող Միհրը ըլլայ ձեզի զօրավիգ։ (կը մեկնին) Ուրեմն, այո՛, հիմա կը հասկնամ որ թոյլ կապերով միացած են ինծի հետ։ Սատանայ, ես քեզ կ'առնեմ իբրեւ վահան, քեզ կը հագուիմ իբրեւ զրահ, ո՞ր սուրը պիտի կարենայ խոցոտել գիս այն ատեն։

Ուզես թէ չուզես՝ Հայաստան, քու թագաւորը ես պիտի ըլլամ... կ'ապստամբի՞ս... արեան մէջ պիտի լողաս... ես քեզի կեանք կ'ուզեմ տալ, դու ինծի մահ կը սպառնաս... Հայաստան գործդ Անդովկի թոռան հետ է։ Քու սերունդներդ գիս ուրացող պիտի կոչեն, ի՞նչ փոյթ, քու թագաւորական գահը աւելի կ'արժէ... (ամբոխի աղմուկ ներսէն)։ Ի՞նչ աղմուկ է այս զոր կը լսեմ։

Արտափեռնեան. – (շտապով գալով) Տէր Մարզպան, խուժանը սարսափելի փոթորիկի մը պէս բերդին վրայ կը քալէ։

Վասակ. – Շուտ, սեւ նժոյգս թամբէ։

Ձայն մը. – Կեցէ՛ք, կեցէ՛ք, կեցէ՛ք։

Վասակ. – Փախի՛ր, փախի՛ր, փախի՛ր թշուառական. (կ'երթան Վասակ և Արտափեռնեան)։

ՏԵՍԻԼ Դ.

ՂԵՈՆԴ և ԱՐՇԱՒԻՐ։

Ղեւոնդ. – Ողջո՛յն, Արշաւիր իշխան, դու յաղթական սպարապետը տաճար առաջնորդողներու մէջը չէի՞ր։ Բայց ինչո՞ւ համար է այդ սարսափը դէմքիդ վրայ։

Արշաւիր. – Երկնակամարը կը տատանի իր հիմերուն վրայ, Հայր, ես տեսած էի Հայաստանի ահեղ փոթորիկները, բայց ոչ երբեք այս գիշերուան նման։

Ղեւոնդ. – Ի՞նչ փոթորիկ։

Արշաւիր. – Ամէն ոք կը պատմէ նոր և զարմանալի տեսիլներ. ամուր բերդեր տապալեր են, մեծ գիսաւոր մը երեւցեր է Հայաստանի երկնքին վրայ։

Ղեւոնդ. – Աստուծոյ լոյսը Հայաստանի վրայ է, անով սա պիտի յաղթէ խաւարի։

Արշաւիր. – Բայց ժողովուրդը տարբեր մեկնութիւն կու տայ։

Ղեւոնդ. – Գիսաւորը, Արշաւիր, մեր սուրբ հաւատքն է, միշտ փայլուն և յաղթական. միտդ պահէ, որչափ ատեն որ Հայը ապրի երկրագունդի վրայ՝ միշտ պիտի փայլի այդ հաւատքը, Վարդանի և Հայուն հաւատքը։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆԵՐԸ ապա, ԱՐՏԱԿ, ԱՌԱՆՁԱՐ։

Արշաւիր. – Բարեկամներ, պերճ նախարարներ, յարմար ժամանակին հասաք, եթէ կ'ուզենք ճշմարիտ Հայեր մնալ, դիւցազնական գործով մը սրբենք մեր ճակտին արատը, կամ հոս խնայենք մեր սուրերուն վրայ։

Ղեւոնդ. – Երջանիկ է Հայաստանը երբ ձեզի պէս կորիւններէ կ'առաջնորդուի։

Արտակ. – Հայր, պատրաստ ենք Հայաստանի համար մեր արիւնը թափելու։ (փողի ձայներ)։

Առանձնար. – Փողի ձայն, ի՞նչ է ասիկա։

Ղեւոնդ. – Վարդանի գալուստը կ'աւետէ։ (կը մեկնին բացի Ղեւոնդեն)։

ՏԵՍԻԼ Զ.

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ և ՂԵՈՆԴ Երկց բեմին վրայ։

Վարդան. – Տէր Ղեւոնդ, հոգիս հրճուանքով կը տեսնեմ որ հայ կղերը յաջողեցաւ կազմակերպել տարիներէ ի վեր պառակտած աշխարհ մը՝ այս սուրբ և բախտաւճիռ ճակատամարտին համար։

Ղեւոնդ. – Վարդան, չեմ ժխտեր, թէ հայ կղերը մեծ դեր մը կատարեց. մի՛ մոռնար և սակայն որ դուն ես որ մեր երկրին բոլոր կենդանի ու թարմ ուժերը հայրենիքի դրօշին տակ կանչելով, քանի մը օրէն զանոնք պիտի առաջնորդես դէպի փառքի ասպարէզը։ (հազիւ այս խօսքերը աւարտած, ներս կը մտնեն Վարդանի զինակիրը)։

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆԵՐԸ, ԶԻՆԱԿԻՐԸ և ԱՇԽԷՆ։

Զինակիրը. – Տէ՛ր Սպարապետ, ազնուազարմ օրիորդ մը, սպառազէն վիճակի մէջ, կը փափաքի շուտով ձեզի հետ տեսնուիլ։

Վարդան. – Ներս առաջնորդէ։ (Զինակիրը խոնարհելով կը մեկնի)։

Ղեւոնդ. – Բազմաթիւ հայ կիներ երգուեր են իրենց կեանքը զոհելու մեր Լոյս-Կրօնքին և սիրելի Հայրենիքին համար։

Աշխեն. – (պատկառանքով կը խոնարհի և կը կենայ)։

Վարդան. – Օրիորդ, ո՞վ ես դու, և ի՞նչ կ'ուզես։

Աշխեն. – Իմ անունս է Աշխէն։ Ես Արծրունի տոհմէն եմ։ Դեռ նոր նշանուած էի ծաղկատի և զեղազէմ Գարեգին նախարարին հետ, երբ նա Քուշանաց աշխարհ մեկնեցաւ։ Հոն Խոսրասանի անապատին մէջ, հրատարակաւ խայտառակած ըլլալով Արքայից Արքան՝ անոր հրամանով նահատակուեցաւ։ Ես երդուեր եմ, Տէր Սպարապետ, պատերազմի դաշտը երթալ և իմ սիրելիիս արեան վրէժը լուծել և կուսական արիւնովս ջնջել այն սեւ բիծը զոր Մերուժան Արծրունին դրոշմեր է մեր փառապանծ տոհմին ճակատը։

Վարդան. – Զքնաղ Աշխէն, կը գովեմ քու վառ հայրենասիրութիւնդ, քու ազնուական զգացումներդ. բայց ես քեզի կ'ըսեմ որ պատերազմին արիւնոտ դաշտը քու նուրբ կազմուածքիդ համար չէ։ Դարձի՛ր հայրենի տունդ, և պաշտպանէ զայն՝ եթէ թշնամին հոն ոտք կոխէ։

Աշխեն. – (Զհռնամած Վարդանին ուղղուած և պաղատագին շեշտով մը)։ Գթա՛ իմ վրաս, ո՜հ տէր Սպարապետ, դու որ հայ յեղափոխութեան ոգին եղար։ Քու ոգեշունչ ձայնն էր որ շարժեց, ոգեւորեց, ոտքի կանգնեցուց, հայ ժողովուրդի բոլոր դասակարգերը որոնք մէկ սիրտ, մէկ ոգի դարձած՝ զինուած և սաղաւարտուած են. սուրը մէջքին, վահան ձեռքերնին, ոչ միայն մարդիկ, այլ և կիները։

Վարդան. – Դուստր իմ, ռազմի ճակատը վըտանգներով լեցուն է։

Աշխեն. – (բանալով շալի վերարկուին ժալքերը) Ահա՛, ես ալ այդպէս զինուած, և ինծի պէս բազմաթիւ հայ աղջիկներ։

Ղեւոնդ. – Աշխէն, տուն դարձիր։

Աշխեն. – (ոգեւորուած) Դուն չէ՞ր, Հայր իմ, որ հաստատել տուիր այս զարհուրելի օրէնքը. «Թող հայրը չխնայէ իր զաւկին, և զաւակը թող չակնածէ հօրմէն, կինը թող կռուի իր ամուսինին դէմ, և ծառան իր տիրոջը դէմ, եթէ ասոնք Աստուծոյ օրէնքին դրժած են»։ Եթէ իմ ձեռքը կրնայ ծանրանալ իմ մեր ձաւորին դէմ, որչափ եւս աւելի թշնամիին դէմ, որ եկած է քանդելու ինչ որ սուրբ և նուիրական է։

Ղեւոնդ. – Աշխէն, լաւ կերպով միտքիդ մէջ տպաւորէ այս խօսքերը, (ներքին դշնամին աւելի վնասակար է քան արտաքին դշնամին)։ Հայրենիքի թշնամի մը արժանի չէ արեւուն լոյսը տեսնելու։ Աշխէն տունդ դարձիր, և հսկէ հայրենադաւերուն վրայ։

Աշխեն. – (մեկուսի, ձայնը կոկորդին մէջ խեղդած)։ Սրբազան Մասիս, վկայ եղիր։ Գիս պիտի տեսնես Աւարայրի դաշտին մէջ Տղմուտ գետի ափին (տխրագեմ դուրս կ'ելլէ)։

Վարդան. – Որչափ ատեն որ հայ ազգը կը ծնանի այդպիսի հոգիներ, Հայաստան յաւիտեան կ'ապրի։

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՅՆԵՐԸ. ՎԱՍԱԿ, ԶԱՆԴԱԶԱՆ, ԱՐՏԱԿ, ՏԻՐՈՑ, ԳԱՏԻՇՈՅ։

Վարդան. – Հայաստա՛ն, ահա ազատութեանդ ժամը հնչեց, մօտ է փրկութիւնդ։ Բայց ես ստիպուած եմ ամբաստանել շատ մը երեւելի նախարարներ, որոնք Ցազկերտի կողմը անցնելով միաբանած են Հայաստանի դէմ։

Բոլորը. – (խորհրդաւոր) Ցազկերտի՞ն, ո՞վ են անոնք։

Վարդան. – Թող իմ տեղս խօսի իմ սուրս (վերկացնելով սուրը). ես առաջին կը մերկացընեմ զայն... Ով սուր, պիտի չողաս թշնամիին պարանոցին վրայ, քանի Վարդանը ողջ է։

Ղեւոնդ. – Վարդա՛ն, Հայ դիւցազներուն գլուխ անցիր։

© National Library of Armenia

Բողորը. – Վարդան...

Վասակ. – (առանձին) Նա առաջնորդ։

Վարդան. – Կ'երդնում Մամգոնի շիրմին վրայ, Ջախջախել Սասանին գլուխը։

Զանդազան. – Վախցէք Յազկերտէն. ան սարսափ մըն է բովանդակ աշխարհի։

Արտակ. – Մինչեւ արեան վերջին կաթիլը թափելու պատրաստ ժողովուրդ մը ունի բռնաւորը իր դիմաց։ (Կը մեկնի)։

Վասակ. – Այդ ի՞նչ ազիտաւոր յանդգնութիւն։

Տիրոց. – Վայ այն գլխուն որ կը համարձակի Արքայից Արքային հրամանները արհամարհել։

Գատիշոյ. – Ո՞վ է, նորէն ո՞վ է այդ յանդուգնը։

Ղեւոնդ. – Քու դէմդ կանգնածն է, և գլուխը միայն Աստուծոյ դիմաց կը ծռէ։

Վասակ. – Ո՜վ նենգաւոր ճակատագիր։

Ղեւոնդ. – Մատնանշելով ուրացող նախարարները)։ Թող ոչնչանան, Հայաստան, քու բոլոր դաւաճաններդ։ (Կը մեկնին բացի Տիրոցէն և Գատիշոյեն)։

ՏԵՍԻԼ Թ.

ՏԻՐՈՑ և ԳԱՏԻՇՈՅ առանձին։

Տիրոց. – Գատիշոյ, ի՞նչ պատահած է որ այսօր Վասակի ճակատը այնքան մութ է։

Գատիշոյ. – Տիրոց, ապստամբութեան դրօշը բարձրացած է արդէն, Ողական բերդին վրայ։

Տիրոց. – Ապստամբ Հայաստան, պիտի յանդգնի՞ մինչեւ պատերազմի դաշտը իջնել։

Գատիշոյ – Վասակին համաձայն՝ ոչ, ինծի համաձայն՝ այո։ Հայաստան՝ ըլլալէ ի վեր՝ այսպիսի խիզախ և սեգ ոգի ցոյց տուած չէ։

Տիրոց. – Այո՛, մենք կրակի հետ խաղացինք։

Գատիշոյ. – Մեր դատաստանը վերջին դատաստանին պէս ահաւոր և մանրամասն պիտի ըլլայ։ Գործիք ենք Արքայի մը ձեռքին մէջ, որ անգութ է։

Տիրոց. – Արդէն գիշերը արիւնով սկսաւ։ Առանձար Ամատունին փշտիպաններու վաշտ մը սրէ անցուցեր է։

Գատիշոյ. – Զարմանալի երեւոյթ, մեր կուսակցութիւնը ինքնիր մէջ խախուտ է. մեր ընտանիքներն անգամ Վարդանի համամիտ են։

Տիրոց. – Միակ յոյսս Վասակի վրայ է։ Մեզմէ գաղտնի ծրագիր մը ունի, որ պիտի արգիլէ պատերազմի հրատարակութիւնը, մինչեւ որ Սասանեան գունդերը բռնեն Հայաստանի ռազմական կարեւոր կէտերը, և թուլանայ Հայ բանակին եռանդը։

Գատիշոյ. – Անկարելի բան է որ Հայաստանի մէջ գաղտնիք մնայ, ես ստիպուած եմ մեկնիլ։ Կը թուի թէ ատելի կղերին դրդմամբ և Վարդանի նախագահութեան տակ գաղտնի ժողով մը գումարուեր է, որուն վճիռները հրապարակաւ պիտի յայտարարուին. ու Վարդան ժողովրդեան ցոյցերուն առարկայ պիտի ըլլայ. ես կ'երթամ կը միանամ այդ ցոյցերուն, գու յետոյ կու գաս, կը սպասեմ քեզի։

Տիրոց. – Յօժարութեամբ։

ՏԵՍԻԼ Ժ.

ՎԱՐԴԱՆ, ՂԵՒՈՆԴ, ԱՐՇԱՒԻՐ, ԱՐՏԱԿ և հոյները։

Ղեւոնդ. – Եւ դեռ լռութիւն...։ Ո՛հ, իջիր նենգաւորները պատժելու։ Հիմա որ Տիզբոնի շանթը կ'որոտայ մեր դաշտերուն վրայ, հիմա որ փայլակներ ուղղուած են մեզի դէմ։ (Վարդանի դառնալով). Յանուն համօրէն հայութեան (ներս կը մտնի Վահանիկ բարձի վրայ դրած Վարդանին սուրը, գօտին) մէջքիդ կը կապեմ քաջերուն սուրը, որով գիւցազն սերունդներ դարերով արթուն հսկեցին Հայաստանի փրկութեան և փառքին համար։

Վարդան. – Այս սուրը որ իմ նախահայրերուս փառքն ու պարծանքն է, պիտի մերկացնեմ Հայաստանի ազատութեան համար։ Ազնուազարմ ընկերներ, բարձրացուցէք ձեր աչքերը դէպի երկինք և երդուընցէք՝ վրէժ հայրենիքի և կրօնքի դաւաճաններուն, միասիրտ միահոգի կռուիլ՝ մինչեւ որ պարսիկ բագինները հողի հաւասարին։

Բոլորը. – Կ'երդնունք։

Ղեւոնդ. – Այո՛ զէնքով, վահանով և սաղաւարտով այս անգամ պիտի պաշտպանէք սրբութիւնները. եկեղեցի և Հայրենիք ձեր արիւնով պիտի զօրանայ և հաստահիմն պիտի ամրանայ. ուստի պիտի չխնայէ հայրն իր որդւոյն և որդին իր հօր. թող օրէնքը թագաւորէ Հայաստանի մէջ։

Վարդան. – Վաղը երբ արշալոյսը ծագի Մասիսի բարձունքէն, գիտցէք որ վրէժի ժամն է։ Պիտի ընդդիմանա՞ք։

Բոլորը. – Այո՛... բոլորս ալ։

Արտակ, – Այդ օրը կը բարձրանայ։

Արշաւիր. – Մեզի համար զինուելու նշան է։

Բոլորը. – Եւ յաղթութեան։

Առանձար. – Սպարապետ, ի՞նչ աղաղակ արձագանգ պիտի տայ անոր։

Վարդան. – Ի զէ՛ն...

Իշխանք. – Ի զէ՛ն...

Վարագոյր

ԱՐԱՐ ԶՈՐԲՈՐԴ

Բեմը կը ներկայացնէ Աւարայրի դաշտը երկու բանակներու վրաններով, իրարմէ բաժնուած Տղմուտ գետով։ Գետին աջ կողմը Վարդանի բանակն է խաչագարդ վրաններով։ Հեռուն կը տեսնուի ապիտակագարդ խորան մը մոմերով լուսաւորուած, խորանը շրջապատուած է զօրականներով, որոնց մէջտեղ Ղեւոնդ՝ խաչը ձեռքին մէջ։

Գետին ձախ ափը կը տարածուի Նիւսաղաւորտի բանակը, մոխրագոյն վրաններով։ Սպարապետին վրանի կոնաձեւ գագաթին վրայ դրուած է ոսկեղէն գունդ մը, որուն վրայ կը փայլի պարսկական սրբազան վառը, ոսկեձաձանչ արեգակը։ Բանակին մէջտեղ ատրուշան մը։

ՏԵՍԻԼ Ա.

ՎԱՐԴԱՆ, ՂԵՒՈՆԴ և Հայ նախարարներ։

Վարդան. – (Կորովի ձայնով) Մեր թշնամիներու ատրուշաններու կրակը, մեր սուրը Հայրենիքին մէջ կը վառի։ Օ՜ն, արթննցէք Արամեան քաջայաղթ պերճ դիւցազներ, դիւամոլ աշխարհին դէմ, և ձեր կարմիր արիւնով մարեցէք պիղծ կրակին բոցը։

Ղեւոնդ. – Զարթիք, տեսէք ինչպէս նկուն եղած Սասանայ փառքին աստղը, որ կը չողչողար։ Խաչով և զէնքով ամրացած՝ արշաւեցէք ի հուր և ի սուր, և դժոխքի անդունդին մէջ խորտակեցէք դիւազգեստ մոգերու խումբը։

Առանձար. – (Ներս մտնելով) Ողջո՛յն, Սպարապետ, երեք հարիւր քաջերովս ոչնչացուցի պարսիկ վերջապահ գունդը, ճամբու երկայնքին ուրիշ բան չի տեսնուիր, բայց եթէ պարսիկ դիակներ, և սարսափահար փախստականներ։ (Պատերազմի խառնուրդ)։

Վարդան. – Դէպի ո՞ւր կը յառաջանայ թշնամի բանակը։

Առանձար. – Դէպի Հայաստանի սիրտը, Այրարատ։

Ղեւոնդ. – Անիկա կանգ պիտի առնէ ձեր կուրծքերուն առջեւ։

Վարդան. – Լուր ունի՞ս արդեօք, Արքայից արքան՝ Յազկերտ, բանակին մէջն է։

Առանձար. – Այո՛։

Վարդան. – Բաւական է որ Հայաստան անգամ մը ցնցէ այդ հրէշը՝ որ փչրի։

Ղեւոնդ. – Անոր աւերակներուն վրայ պիտի ծաղկի վերածնուած հայրենիք մը (Կը մեկնին)։

ՏԵՍԻԼ Բ.

ՄԻՀՐՆԵՐՍԵՀ, ՄՈՒՇԿԱՆ, ԱՐՄԱՒԻՐ, ՅԱԶԿԵՐՏ, ՆՈՒՐԱԿ և ՎԱՍԱԿ։

Միհրներսեհ. – (Յազկերտը մեջերնին առած)։ Այո՛, Տէր Արքայ, ոչ ոք աւելի բախտաւոր աստղի տակ ծնաւ. կը զգամ թէ ոչ մէկ մահկանացու քեզի չափ երջանիկ եղաւ, և ոչ ալ պիտի կարենայ ըլլալ։

Մուշկան. – Այս բանակին առջեւ, ուր հզօր զօրութիւնդ և տէրութեանդ ընդարձակութիւնը կը պատկերանայ, արեւելքի մէջ դու միայն կը մնաս արեւ։

Արմաիսի. Հայ բանակը, Տէր արքայ, մեր փիղերուն ճարակ պիտի դառնայ. թիւով այդչափ են՝ որքան մեր զօրավարներուն խումբը։

Յազկերտ. – Միհրներսեհ, ո՞ւր է հայերուն մարգպանը։

Միհրներսեհ. – Խաչապաշտներու բանակին մէջն է, երբ խառնուրդը սաստկանայ մեր կողմը պիտի անցնի։ (Ոտնաձայն մը).

Յազկերտ. – Լսենք, ան կը մօտենայ (քանի մը քայլ կ'առնէ, մինչ նուիրակը կ'երեւի բեմին վրայ)։

Նուիրակ. – Արքայ քաջ, դիմակաւոր մարդ մը, ոսկեսանձ սեւ նժոյգ մը փոթորկելով, արքունի բանակը հասաւ։

Մուշկան. – Մի գուցէ լրտես մը....։

Նուիրակ. – Լրտես թէ բանբեր, ես զայն չեմ գիտեր։

Միհրներսեհ. – Սրամիտ և խորամանկ Վասակ....։

Յազկերտ. – Թող ներս մտնէ, բայց ձիէն վար իջած։ (Նուիրակը կը մեկնի խոնարհելով)։

Արմաիսի. – (Կեղծելով) Վասակ Սիւնի, արքունի

© National Library of Armenia

քունի վճիռներուն հլու կամակատարը, մեզ ամօթահար պիտի չընէ։

Վասակ. – (կը մօտենայ և խոնարհելով Յազկերտի առջեւ) Ողջո՜յն, արքայ աստուածազարմ, ահա Սիւնեաց աշխարհը երկրպագեց ատրուշանին։

Յազկերտ. – Ի՞նչ ոյժ ունի հայերու այդ աննշան գունդը։

Վասակ. – Տէր արքայ, աննշան չէ հայերու այդ գունդը. փայլակ մըն է որ կրակ կը տեղայ. ուր որ թափի հոն յաղթանակ կը կերտէ։

Յազկերտ. – Ո՞վ է անոր առաջնորդը։

Վասակ. – (շուարած) Անոր գլուխ և առաջնորդ կանգնած է՝ Քաջն Վարդան, որուն սիրտը առիւծի քաջութիւն ունի, ոտքը փայլակի արագութիւն։

Միհրներսեհ. – (զայրացած) Դու Վասակ, հայ խուժանն անգամ չկրցար Միհրի առջեւ ծունր բերել։

Վասակ. – Հայ խուժանն...։ Ան կը նախընտրէ մահ կամ յաղթանակ, բայց ոչ երբեք պաշտել կրակը. ոչ մէկ մարդ այս աշխարհէն կրնայ պրծիլ անոր վրէժէն, այս բանին փորձը առին մոգերը։

Արմաիդի. – (կատաղի ակնարկ մը նետելով Վասակի վրայ) Մոգերու բոլոր յոյսը, կիներն ու մանուկներն էին, բայց Վասակի տուած գրաւականը օդին մէջ ցնդեցաւ առաջին օրէն։

Վասակ. – (գրեթէ կակազելով) Արքայ քաջ, հայոց կիները ու մանուկները չարագոյն են քան այր մարդերը։

Մուշկան. – Դու մարզպանական խօսք տուիր որ Հայաստան երբեք պիտի չյանդգնէր սուր քաշել սասանեան զօրութեան դէմ։

Վասակ. – (կորակոր գետին նայելով) Ո՛հ. սակայն աննախընթաց վեհ տեսարան մը ամէն նախագուշակութիւն յեղաշրջեց ։ Վարդան մերկացնելով իր սուրը նշան տուաւ ապստամբութեան։

Յազկերտ. – (որոտալով) Թշուառական Վասակ, Տիզբոնի բանտերը պիտի ըլլան քեզի բնակարան։

Վասակ. – (դողահար) Գթութիւն Տէր արքայ. հայոց թագին սիրոյն համար շատ գիշերներ անքուն անցուցի, անիծուեցայ ես հայրենիքէս, ազգէս, կրօնքէս հրաժարեցայ, Որմիզդին փարեցայ ասոր համար միայն։

Յազկերտ. – (անհղաատատ) Գնա՛. եթէ Վարդան լինայ, դու պիտի ըլլաս անոր փառքին պատուանդանը։ (Ամօթահար կը մեկնի Վասակ)։

Միհրներսեհ։ – Տէ՛ր արքայ, ճերմակ ջորիները պիտի քաշեն քու յաղթական կառքդ ապըստամբներու դիակներու վրայէն։

Յազկերտ. – (խոր մտածութեան մէջ թաղուած) Մի զոռոզանար Միհրներսեհ, յաղթանակները բանակներու թիւէն կախուած չեն։ Ո՜հ սոսկալի տեսարան, դեռ ականջիս մէջ կը հնչէ որոտացող ձայնը... նստած էի ոսկեղէն գահին վրայ, դիմացս տարածուած Հայաստանի ծաղկալից դաշտերը ատրուշաններու ծուխով մրոտուած ։ Զուարճացայ Միհրի թագաւորութեան յաղթանակը տեսնելով, բայց արծուի նման հսկայ դիցազ մը տեսայ, դէպի ինձ մօտենալով ահաւոր ձայնով մը որոտաց. Պարսից սատան, թող արիւնիս վրէժը գլխուս վրայ կուտակուի։ Ես սրտադող ճչելով, հովին մէջ երերուն տերեւի մը պէս կովկասի անդունդին մէջ գլորեցայ։

Մուշկան. – (քծնելով) Այդ դիւցազը Վարդան Մամիկոնեանն է։ Ո՞վ է այդ Վարդանը. միթէ երկնքի կոյսէ՞ն ծնած է, թող գայ ան. երթանք, Տէր արքայ, և մեր փառքի և քաջութեան քարոզ և վկայ՝ հայերուն ամբարտաւան Մասիսը թողունք, որ ահա իր ապստամբ գլուխը վեր վերցուցած ամպերու մէջէն մեզ կը դիտէ։

Յազկերտ. – Եթէ Վարդան կորսուի՝ ձեզմէ ոչ ոք բարկութենէս կը ճողոպրի։ (Կը մեկնի Յազկերտ. փողերու ձայն, բանակին)։

ՏԵՍԻԼ Գ.

ՎԱՐԴԱՆ, ՂԵՒՈՆԴ, ՄԻՀՐՆԵՐՍԵՀ և ՄՈՒՇԿԱՆ։

Վարդան. – Է՜յ... կա՛ց։ (Կը լսուին քայլերգներ, փողի ձայներ կը շարունակուի)։

Ղեւոնդ. – Անոնք կանգ առին, և կարծես կ'ուզեն բանակցիլ։

Միհրներսեհ. – (սուրը ձեռքին մէջ բռնած) Տեսէք այս սուրը, կը քաշեմ ապստամբներուն դէմ. կը կարծէ՞ք որ այս սուրը մտնէ իր պատեանին մէջ։ Ո՛չ երբեք. մինչեւ որ ահագին հարուածով մը չսասանեցնեմ խաչապաշտ Հայաստանը։

Ղեւոնդ. – Միհրներսե՛հ, սարսափելի ճշմարտութիւն մը ելաւ բերնէդ։ Հայաստանի մէջ չմնաց քար մը, բոյս մը, ծաղիկ մը զոր սասանեաններըն հայ արիւնով ներկած չըլլան, բայց նա միշտ գաղափարի սպառնալիքներ գոռաց իր բռնապետներուն դէմ և ոչ երբեք բռնապետներու սպառնալիքներէն դողաց։

Միհրներսեհ. – (որոտալով) Քու վրադ, Հայաստան, արդէն կ'որոտայ պատժող շանթը։ Արքայից արքային բանակները արդէն մարախներու պէս ծածկեր են Հայաստանի դաշտերը։ (փողերու ձայներ միշտ աւելի ուժգին)։

Մուշկան. – Գիտեցէք... ինչպիսի՜ և որչափ բանակ։

Ղեւոնդ. – Քու զինուորներդ, քու վարձկան սուրերդ պիտի չկարենան յաղթել ժողովուրդի մը որ ազատութեան կը տենչայ։

Վարդան. – Ոչ ոք պիտի կարենայ փոխել Հայաստանի բախտը։

Միհրներսեհ. – (անաստատ) Արքայից արքան, Յազկերտն է, Հայաստանի բախտը։

Մուշկան. – Ահա զարհուրելի պատասխանը։

Վարդան. – (ազնուական շեշտով) Իցիւ թէ դու քու ցեղիդ բախտը ըլլայիր։ Կործանումէ թող վախնան անոնք որ մոխիրը կը պաշտեն։

Միհրներսեհ,. – Միշտ անփոփոխելին Վարդան (հեգնական կերպով)։

Ղեւոնդ. – Միհրներսեհ, հայ արեան բողոքի ձայնը արդարութեան թեւերուն վրայ բարձրանալով ահագին պիտի զարնէ բախտիդ անիւը, և սուրդ պիտի փշրէ ձեռքերուդ մէջ։

Միհրներսեհ. – Գթութեան ստուերն անգամ ինծի պիտի չմօտենայ ։ (առանձին) Եկո՛ւր Մուշկան, հեռու ասոնցմէ, այդ ալեւոր ծերը աւելի ցնցեց քան յոյներուն և քուշաններու բանակները ։ (Միհրներսեհ և Մուշկան կը մեկնին)։

ՏԵՍԻԼ Դ.

ՂԵՒՈՆԴ, ԱՐՇԱՒԻՐ և ԱՐՏԱԿ։

Ղեւոնդ. – Հայե՛ր, մինչեւ երբ... հասաւ վրէժի յետին ժամը. կախը սուրբ է, փառքը անհուն. սրբենք հայրենիքը պարսիկ պղծութենէն , փշրենք գերութեան շղթաները։

Արշաւիր. – Պատրա՛ստ եմ, Սպարապետ։

Ղեւոնդ. – Արտակ Մոկացի...

Արտակ. – Ահաւասիկ եմ...

Ղեւոնդ. – Այսօր կեանքիս գեղեցկագոյն օրն է. արիացիր քաջդ, նիզակդ պնդէ (ուրախ)։

Արտակ. – Հայր , քու կրակուբոց աչքերդ հիմա պիտի տեսնեն թէ Հայկի, Արամի և Տիգրանի արիւնէն եմ։ (փողերու ձայն և բանակի շարժում)։

Ղեւոնդ. – Օ՛ն, ուրեմն, հայ զօրքերու եռանդը բորբոքած է, երկնքի և երկրի ճշմարիտ Աստուածը թող խորտակէ ամբարիշտ բռնակալները։ Եթէ ձեզմէ անարգ մը գտնուի սուրբ Գրիգորի փարախին մէջ, արեւը թող զրկէ զինքը իր ճառագայթներէն։ Երկինքը թող չլսէ իր աղօթքին, և հասցնէ իր վերջին վախճանին։ Գրախտի գետերը թող չօրօրեն իր գերեզմանը։

Բոլորը – Յաղթութիւն կամ մահ... (կը մեկնին. պատերազմի խառնուրդը կրկնապատկուած)։

ՏԵՍԻԼ Ե.

ՍՈՒՐԷՆ, ՈՐՄԻԶԴ։

Սուրէն. – (ձեռքին մէջ սուր մը) Գիտէ՛ Որմիզդ, գիտէ։ Մեր բանակին մէջ ալ մատնիչներ կան, անոնցմէ մաս մը փախուստի ճամբան բռներ է։

Որմիզդ. – Եթէ Վարդան իր կրօնքին և հայրենիքի սիրով բոցավառ չըլլար, անտարակոյս Աւարայրի ճակատամարտը իր զարգմանակին ամէնէն փայլուն գոհարը պիտի ըլլար։ Բայց նա կ'աճապարէ և կարծես խառնուրդին մէջ մահ կը փնտռէ...։

Ձայներ. – (ներսէն) Փախէք... փախէք... փախէ՛ք...։

Որմիզդ. – Հեռու փախիր, Սուրէն, աւելի հեռու փախիր. Վարդան հասած է մինչեւ կանանոցի վրանները։

Սուրէն. – Ո՞ւր կրնաս փախչիլ հայերու կատաղի վրէժխնդրութենէն (դիտելով դաշտը նետուէն)։

Որմիզդ. – Արմաիդի մոգպետը պաշարուած է հայերէն, որոնք կարկուտի պէս նետեր կը տեղան. ան կը փախչի, թշնամիներուն ձեռքը իյնալու վրայ է.... Արմաիդի.... բռնուեցաւ... (ուրախութեան ձայն)։ Ո՜հ, լսէ հայերու ուրախութեան աղաղակը...։

Ձայներ. – Փախէ՛ք... փախէ՛ք... փախէ՛ք...

Սուրէն. – Աչքերուս տակ տեսնել պարսիկ դիւցազներուն մահը.... և անոնցմէ վերջ ապրիլ՝

© National Library of Armenia

վատութիւն է.... (կը քաշէ սուրը) Դու որ յոյներուն և քուշաններուն յաղթեցիր, դու պարտուեցար Աւարայրի մէջ։ Օն մխուէ սրտիս մէջ (կը խոցէ ու մեռած գետին կ'իյնայ)։

Որմիզդ. – (դալկահար) Ահա ես այլեւս ազատ եմ. ո՜հ, Սուրէն, Որմիզդ պիտի փախչի Հայաստանի հեռաւոր մոռցուած մէկ լերան մը վրայ (կը փախչի)։

ՏԵՍԻԼ Զ.

ՄՈՒՇԿԱՆ և ԱՐՄԱԻԻՐ։

Մուշկան. – Արմաիդի, տագնապը մեծ էր, քաջն Վարդան մրրկի մը թափով յարձակեցաւ մեր աջ թեւին վրայ զոր խորտակելով ամէն կողմ ցրուեց։

Արմաիդի. – Ես ալ առի հայ հարուածին սաստը։ Բռնուեցայ, զինուորը կ'ուզէր զիս ատրուշանի մը մէջ խորովել, բայց Արշաւիր Կամսարական վրայ հասնելով ու նիզակի կոթով հարուածելով գլուխս. Գնա, ըսաւ, վատ պարսիկ, դու արժանի չես հայ ձեռքէ մեռնելու։

Մուշկան. – Միհրական տօներու անիծեալ օր...

Արմաիդի. – Եթէ Սուրէն առնէ այդ լուրերը՝ կաթուածահար կ'ըլլայ։

Մուշկան. – Ո՞ւր թողուցիր զինքը։

Արմաիդի. – Իմ բարեկամ Որմիզդի հետ, այս բլրակին վրայ, բոլորովին յուսահատ վիճակի մէջ։

Մուշկան. – Ինքը չէ՞ որ հոս կը հանգչի։

Արմաիդի. – Եթէ ինքն է՝ կենդանի մարդու նշան չի տար. ո՜հ, սիրտս...

Մուշկան. – Ինքը չէ... ինքը չէ... ինքը չէ...

Արմաիդի. – Ո՛չ. ինքն է.. Մուշկան. բայց Սուրէն ոչ եւս է.. Ո՜հ, երիտասարդ և ազնուական Սուրէն. ահա՛ մարեցար, ինչպէս ատրուշանին սուրբ բոցը։

Մուշկան. – Այո՛. և այդ գիւցազներու հետ գետի ափին կը հանգչին ութ պարսիկ մեծամեծներ, զորս արքայից արքան յականէ յանուանէ կը ճանչնայ... (գլուխը ծեծելով) Մուշկան, Մուշկան։ Ի՞նչ պատասխան պիտի տաս երբ ահեղակերպ արքան համար պահանջէ քեզմէ ահեղ հրապարակին առջեւ։

Արմաիդի. – Կա՛ց, Որմիզդ. ո՞ւր ես դու։

Մուշկան. – Փնտռէ՛ զայն, Արմաիդի. ես ընդառաջ կ'երթամ Վզրուկին (Մուշկան կը մեկնի)։

Արմաիդի. – Օ՜ն, աճապարէ՛ Մուշկան, ես կը մնամ հոս Որմիզդի հետքերը հետազօտելու։ (Արմաիդի կը ժռի Սուրէնին վրայ)։ Ես այլեւս ինչո՞ւ տեսնեմ արեւուն ելքը, երբ Իրանի փառքը իր մայրամուտն է հասած։ Եկէ՛ք, իմ խորհուրդներովս գերեզման իջած հայերու կատաղի ուրուականներ։ Եկէ՛ք, խմեցէ՛ք ու գինովցէ՛ք արեամբս որ հիմա գետի պէս պիտի վազցնեմ։ Թոյլ տուէք ինձ, ո՜հ անմահ աստուածներ, ԿՐԱԿ ԵՒ ՋՈՒՐ։ Ահա մոգպետի մը դերը... հողո՛ Սուրէնի սուր... ահա Արմաիդի սիրտը (կը խոցէ ու կ'իյնայ հոն ծածկելով դէմքը)։

ՏԵՍԻԼ Է։

ՎԱՍԱԿ, ԶԻՆՈՒՈՐ։

Վասակ. – (առանձին ինքնիրեն) Հեռու ինծմէ համակրութիւն և գթութիւն... ես այլեւս հայրենիք չունիմ... Եկէ՛ք... Եկէ՛ք... Ո՜հ, կ'ուզեմ այնպիսի զարհուրելի դեր մը կատարել որ Հայաստան սոսկայ ինծմէ... Որոշեցի... ուրացող, մատնիչ... պիտի անմահանամ։....

Զինուոր. – Անձնատուր կամ մահ..

Վասակ. – Դո՞ւ թշուառական, դո՞ւ պիտի յանդգնիս սպաննել Վարդան Մամիկոնեանը։

Զինուոր. – Վարդան Մամիկոնեա՞նը... մենք հրաման չունինք զայն սպաննելու... ան արքայից արքային աչքի լոյսն է։

Ըսէ՛ք Մուշկանի որ Վարդան Մամիկոնեան, մեր նշանաւոր գերին է։ Իրանի մեծ Սպարապետին ես պիտի տամ այս աւետիսը և իրմէ պիտի ստանամ ձեռագիրը՝ ՎԱՐԴԱՆ կենդանի մեր ձեռքերուն մէջ։

Մուշկան. – Ո՞ւր է նա։

Վասակ. – Ապահով վիճակի մէջ, Վարդան միշտ ապահով վիճակի մէջ է. ուր որ գտնես զինքը՝ կենդանի թէ մեռած, միշտ միւնոյն Վարդանն է, անյաղթ Վարդան։

Մուշկան. – Զինուորնե՛ր, այդ Վարդանը չէ, այլ Վասակն է, մեծ հայ մը. մատնիչ իր Հայրենիքին և լրտես Միհրներսեհի։ Առաջ գնա, և տես թէ Վարդան մեռա՞ծ է թէ կը շնչէ։ Եթէ անոր մահուան լուրը բերես՝ գլուխդ դահիճին առջեւ կը նետեմ։ (Կը մեկնին բոլորն ալ)։

ՏԵՍԻԼ Ը.

ՎԱՐԴԱՆ, ՂԵՒՈՆԴ, ԱՐՇԱՒԻՐ և ԱՐՏԱՒ։

Վարդան. – Այսպէս է որ կը մեռնին դիւցազները (յափշտակուած մայրամուտ արեւու երեւոյթին). արժանի երկրպագութեան։ (Կը ցուցնէ մայրամուտը)։

Ղեւոնդ. – Մանկութենէս միակ փափաքս եղաւ այսպէս մեռնիլ... այսպէս ապրիլ։

Վարդան. – Մնաք բարով ընդմիշտ. ընդմիշտ մնաք բարով դուք, քաջ նիզակակիցներ։ Անսահման ուրախութիւն մը ունիմ որ զիս կ'ոգեւորէ։ Մնաք բարով, մնաք բարով, աւելի մեծ լոյս մը աւելի մեծ փառք մը կը կանչէ զիս։ (Հեռանալով դէպի քուլիսներ և ուղղուած իր զինակիցներուն. ոգեւորուած և ժանր). Ո՛վ քաջ զինակիցներ, մի՛ վախէք թշնամիներու բազմութենէն, և ոչ անոնց սուրէն. անոնց սուրը և մեր պարանոցը. վասնզի երկրաւոր փառք, պատիւ և մեծութիւն շահելու համար չէ մեր այս կռիւը. այլ հասած է ժամը ջնջելու նախկին կեղտը և մեռնելու այս երկրիս վրայ՝ պաշտպանելով Կրօնք և Հայրենիք, քաջութեան անմոռաց անուն ձգելով երկնքի և երկրի վրայ (Վարդան կ'անցայտանայ ու կը սկսի ՀԱՒԱՍԱՐԵՍՑԷ՛ ՄԱՀՍ ՄԵՐ... երգը). (կ'երթան)։

Աղաղակներ պատերազմի. Հայերը Տղմուտը կ'անցնին... գետը պարսիկ դիակներով կը լեցուի. Տղմուտը արիւնոտ կը հոսի (իրարանցում)։

(Ոռիշ ձայներ ներսէն). Փախէ՛ք... փախէ՛ք... փախէ՛ք...

ՏԵՍԻԼ Թ.

ՄՈՒՇԿԱՆ, ՏԻՐՈՑ և ՎԱՍԱԿ։

Մուշկան. – Թող մեր բոլոր փողերը հնչեն, թող անոնց ձայնին մէջ խառնուի կոտորածի և մահուան ցանկացող դիւցազներու ոյժը։ (Խառնուրդը կը սաստկանայ վերջին անգամ)։

Տիրոց. – (դուրսէն) Կ'ուզեմ արեաց Սպարապետին ներկայանալ. մեր ռազմաղաշտերը քայքայուած են։ Փախուստը ընդհանուր է. թշնամին յամառ կը հետապնդէ։ (Աղմուկ, փող)։

Պարսիկ ձայն մը. – Դու ասկէ անդին չես անցնիր (ներսէն)։

Տիրոց. – (Մտնելով) Բացի մահէն՝ ոչ ոք կրնայ կեցնել զիս։

Մուշկան. – Ի՞նչ կայ. խօսէ։

Տիրոց. – Սպարապետ, Վարդան զարհուրելի ծրագիր մը գլուխ հանելու վրայ է. ան պատուեց ճեղքեց մեր բանակը, հասաւ և մտաւ փիղերուն մէջ. վիրաւորեց, կատղեցուց գազանները, և դիմացը ելլող պարսիկները ջարդելով հասաւ մինչեւ այդ փիղը որուն ետեւ պահուըտած էր Վասակ Սիւնին։ Ո՜հ, հասի՛ր, շուտով հասիր, կորսուած ենք։

Մուշկան. – Սլացի՛ր փայլակի պէս. ձայն տուր Արտաշիրի որ աշտարակաւոր փիղերով Վարդանը պաշարէ. շուտ անհետացի՛ր... (կը մեկնի)։

Վասակ. – (Կ'երեւի բեմին խորը սուրը ձեռքին, դիւական ժպիտով)։ Մամիկոնեան, մարտիրոս ըլլալու փառքին տենչացիր. ահա նպատակիդ հասար. զարնուած հազարաւոր սլաքներով ինկար Աւարայրի վրայ աչքերդ աստղազարդ երկինք ուղղած. այսպէս ուզեցիր. այսպէս եղաւ։ Թող անիծեն զիս հազարաւոր մայրեր. թող անիծեն զիս առագաստի հարսեր, որոնց սիրելիներն ոչ եւս են... Ահա իմ վերջին կէտը... վերջին կէտը... Ո՜հ, թագը... թագը... (նահանջի ձայներ որու հնչեղուն բեմի վրայ բերուած պիտի ըլլայ Վարդանի մարմինը ծածկուած հայ դրօշներով, որոնց ծայրը սրտին վրայ սեղմած է։ Մարմնոյն երկու կողմ կանգնած են գեղարդակիր Առանձար և Արշաւիր)։

ՏԵՍԻԼ Ժ.

ՅԱՋԿԵՐՏ, ՄԻՀՐՆԵՐՍԵՀ, ՂԵՒՈՆԴ, ՄՈՒՇԿԱՆ և ապա ՎԱՍԱԿ։

Յազկերտ. – (դիտելով Վարդանը) Ո՞վ է այդ գրօշներով ծածկուած ռազմիկը։

Միհրներսեհ. – (գողալով) Իմ արքայից արքային հաւատարիմ ծառան։ Հայեր. (ուղղուած իշխաններուն) ո՞ւր է ձեր Սպարապետը։

Ղեւոնդ. – Երկինքն է... երկինք...

Յազկերտ. – Ո՞վ յանդգնեցաւ խոցոտել Մամիկոնեան ասիւը։

© National Library of Armenia

Մուշկան. – Մարդկային և գազանային միացած ուժերը։

Ցազկերտ. – (Որոտացող ձայնով առ Վասակ). Նենգաւոր Սիւնին, թող նետուի Տիզբոնի որդնալիր բանտերուն մէջ։

Վասակ. – (Մեկուսի, ամօթեն աչքերը ձեռքերով գոցած) Ա՜հ... Հայաստանեայց Ոգի...

Ցազկերտ. – (Պատկառանքով դիտելով մեռած Վարդանը) Աշխարհի մէջ կա՞յ մարդ մը որ ասոր նմանի։ (Կ'առնէ Վարդանի ձեռքը և. կը դնէ իր սրտին վրայ). Դու, Ասիոյ Արեւ, մնաս բարով. հանգչէ խաղաղութեան մէջ։ Անհնարին է որ Հայաստան քեզի հաւասար մըն ալ կարենայ ծնանիլ։ Բարեկամներ... իմ արցունքները անարժան են այս մարդուն, որուն կեանքը փառքով և յաղթանակներով հիւսուեցաւ. միայն մէկ մտածութիւն ունեցաւ. իր Հայրենիքին ազատութիւնը, ձիւնի նման սպիտակ և մանիշակի պէս համեստ։

Այս խօսքերէն վերջ խորհրդաւորութեան մէջ բեմ կու գան Ղեւոնդ Վանանդացի և Աշխէն՝ Վարդանի մարմնոյն ի տես, մինչ երգչախումբը կ'երգէ եռաձայն.

« Հայ քաջերու սուրբ հոգիներ
« Թրոան ահա լոյս կամարներ,
« Հրեշտակներէն պճնազարդուած,
« Ակունքներով լուսաճաճանչ։

« Երկրի վերայ կոյսեր Հայոց
« Փունջ հիւսեցէք մշտադալար,
« Իբր յիշատակ յաւերժական,
« Անոնց չիրմին անմահական »։

Վ ա ր ա գ ո յ ր

Վ Ե Ր Ջ

Հ. ՍԱՀԱԿ ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

S. LYONNET – Les origines de la Version Arménienne et le Diatessaron. Roma, Pontificio Istituto Biblico, 1950.

Մեծարգոյ Հ. Լիոննէ կարեւոր և դժուարին ուսումնասիրութեան մը ձեռնարկած է « Հայերեն թարգմանութեան սկզբնաւորութիւնները և Համաբարբառը » հատորին հրատարակութեամբը։ Գործը 302 էջ, կը սկսի Ներածութեամբ մը և կը վերջացնէ Եզրակացութեամբ մը։ Բաժնուած է երեք մասերու. և առաջինով (էջ 9–54) կը հաստատէ հայկական նախկին թարգմանութեան մը գոյութիւնը՝ հայ աւանդութեան ապացոյցներով, և Կոնիբիրէ սկսեալ՝ փորձերով հայ մատենագիրներու քով գտնելու առաջին թարգմանութենէն մէջբերումներ։ Կ'անցնի յետոյ ցոյց տալու հայ մատենագիրներէ ու թարգմանիչներէ քաղուած օրինակներով ասոնց համաձայնութիւնը՝ հակառակ ընդունուած թարգմանութեան կամ Զօհրապի հրատարակութեան։ Կը զբաղի ապա Եփրեմի և հայ մատենագիրներու և թարգմանիչներու մէջ եղած զուգադիպութիւններով, հետեւցնելու համար հայ առաջին թարգմանութեան գոյութենէն զատ, անոր մէկ քանի յատկանիշները, մատնանշելով հայ նախկին թարգմանութեան ոչ միայն մէկ քանի բառերու կամ բացատրութիւններու նախապատութիւնը, օրինակ իմն՝ աշխատեալք փոխանակ վաստակեալքի, ձուկն՝ փոխանակ կետի, խաշն կամ խաշինք՝ ոչխար կամ ոչխարքի տեղ, բարեխօս փոխանակ միջնորդիչ ըսելու, եւն, այլ և կարեւոր կը նկատէ ընդհանուր և զուցէ դեռ աւելի նշանակութիւն ունեցող հակամիտութիւններ քաղել. զոր օրինակ առաջին թարգմանութիւնը ընդհանրապէս իցէ ստորադասականը կ'աւելցնէ երանի բառին Մտթ. Ե. 3 և յաջորդ համարներու վրայ (հմմտ. Եփր. Ոսկ.) Մտթ. ԺԶ. 17 « երանի իցէ քեզ » (Եփր.), Ղուկ. Ա. 45 « Երանի իցէ որ » (Կիւր.), Ղուկ. ԺԱ. 27 « Երանի իցէ որովայնին (Եփր.), Յովհ. Ի. 29 « Երանի իցէ նոցա որք » (Ոսկ.)։ – Ա. թարգմանութիւնը կը խուսափէ անցեալի դարձուածքէն, մինչ Բ. թարգմանութիւնը կը հետեւի

յունարէնին. բազմաթիւ օրինակներու մէջէն միայն Ոսկեբերանէն, Մտթ. Բ. 24 յարեաւ... և = յարուցեալ։ Գ. 7 իբրեւ ետես = տեսեալ։ Դ. 2 պահեաց = պահեալ։ Ը. 2. մերձեցաւ = մատուցեալ։ Ը. 5 իբրեւ եմուտ = մտեալ։ Թ. 4. գիտաց = ծանուցեալ։ Թ. 9. մինչդեռ անցանէր = անցեալ։ – Աստուերէնէ թարգմանութեան յայտնի մէկ նշանն է անձնական դերանունի մը յաւելումը, հմմտ. Եփրեմի աւետարանէն բերած վկայութիւններու մէջ, ինչպէս Մտթ. Ա. 20 « մի երկնչիր դու ». Դ. 3 « ասա դու ». Ը. 4. « երթ դու ». Ը. 10. « գտի ես ». Ժ. 16. « եղերուք դուք. եւն։ – Յաւելումն երբ մասնիկին վկայութիւն մը բերելու առեն. այսպէս Ոսկեբերանի մօտ. հմմտ. Մտթ. Դ. 10. Ե. 34, 43. Է. 22. Ը. 17. եւն. գործածուած ստէպ Զգօնի կամ Եփրեմի և առ հասարակ ասորերէնէ թարգմանութիւններու մէջ։ Յաւելումն ինչ մասնիկին, օրինակի համար մի միայն Ոսկեբերանի քով. Մտթ. Ժ. 19. « մի ինչ հոգայցէք ». Ժ. 31. « մի ինչ երկնչիցիք ». ԺԲ. 16. « մի յայտ ինչ ումեք առնիցեն », եւն։

Այս և դեռ նման օրինակներով հեղինակը ցոյց կու տայ առաջին թարգմանութենէն ազդուող մեր մատենագիրները և թարգմանիչները։

***

Երկրորդ մասին մէջ որ ուսումնասիրութեանը 55–194 էջերը կը բռնեն, հեղինակը հինգ գլուխներու մէջ կը քննէ հայկական առաջին թարգմանութեան աղբիւրները։ Առաջին գլուխը նուիրած է հայ մատենագիրներու Նոր Կտակարանէն բերած վկայութիւններուն։ Մի առ մի քննադատութեան վերջին եզրակացութիւններուն համաձայն կ'անցնին մեր առջեւէն Ագաթանգեղոս, Կորիւն, Եղնիկ իրենց ընծայուած գրքերով, Յաճախապատում՝ որ Վէպերի և Վէթերի կարծիքով Ս. Մեսրոպի գործ կը նկատուի. Մանդակունի իր ճառերով, Մամբրէ և Եղիշէ, Անանիա Սիւնեցի և Ղազար Փարպեցի։ Ասոնց ամէնուն քով Լիոննէ կը փնտռէ հեռաբեր առաջին թարգմանութենէն Աւետարաններէն բերուած վկայութիւններու մէջ։

Երկրորդ գլուխով քննութեան բովքէն կ'անցնին մեր նախնեաց յունարէնէ թարգմանութիւնները. այսինքն՝ Ոսկեբերանի Մատթէի և Պօղոսի թղթերուն մեկնութիւնները և ճառերը. ճշդելով թարգմանութեան ժամանակները։ Կիւրեղ Երուսաղէմացի, Իսիքիոս Երուսաղէմացի և Սեբերիանոս Գաբաղացի, հասնելով հետեւեալ եզրակացութեան թէ Ոսկեբերեան իր Մատթէի մեկնութեամբ և Կիւրեղ իր Կոչումն ընծայութեան գրքով կը գերազանցնեն միւսները իբր վկայ հայ առաջին թարգմանութեան։

Յաջորդ Երրորդ գլուխը մեր նախնեաց « ասորական թարգմանութիւնները », շատ աւելի նպաստաւոր է հեղինակիս դիտած նպատակին. սակայն կը հարցնէ իրաւամբ, թէ « ի՞նչ բան պիտի արգիլէր հետեւելու դիւրին ճամբէն, և աստուածաշունչի վկայութիւնները փոխանակ նոր թարգմանելու, կրնային իւրացնել արդէն իսկ իրենց և ընթերցողներուն ընտանի եղած թարգմանութիւնը »։ Բայց կը պատասխանէ. « որովհետեւ ասորի հեղինակներուն յիշատակութիւնները, քիչ զարտուղութեամբ, հին ասորականին կամ նոյն իսկ Համաբարբառին ընթերցուածներն են, այսինքն ճիշտ անոնք որ մենք գտանք հայ առաջին թարգմանութեան մէջ, և պիտի չկարենանք երբեք գիտնալ թէ արդեօք հայ թարգմանիչը զանոնք առած է ի՞ր թարգմանութեամբ թէ ընդօրինակելով։ Զգօնի համար երկրորդ կարծիքը ստոյգ է, կ'ըսէ, քիչ շատ, իսկ Եփրեմի համար՝ հաւանական »։

Գրախօսականի մը սահմաններէն պիտի հեռանայի եթէ ներկայ հատորիս վրայ ճշգրիտ գաղափար մը ընթերցողներուս փորձէի տալ, ինչ որ կարեւոր էր անշուշտ նման խղճամիտ և մանրաքնին ուսումնասիրութեան մը համար. և Լիոննէ ամէն գնահատանքի արժանի է սուրբ Գրքի առաջին հայ թարգմանութեան վրայ մինչեւ այսօր գրուած հայ և օտար քննութիւնները իր այս հատորին մէջ ամփոփելուն, և իր յատուկ աշխատանքը բերելուն՝ օրինակներով հաստատելու հայերէն առաջին թարգմանութեան վրայէ եղած վրացական թարգմանութիւնը։ Այս է չորրորդ գլուխն 144–165 էջերուն նպատակը։

Իսկ հինգերորդ գլուխով (էջ 166–178) մեր ծիսական գրքերէն՝ Ժամագրքի և Մաշտոցի վկայութիւններով կը զբաղի, ու հետեւելով Հ. Էսապալեանի՝ առաջինէն օրինակ կը բերէ Զաքարիայի օրհնութեան մէջ եղած տարբերութիւնը, և Ս. Կուսին Մեծացուսցէին մանր զանազանակները։ Իսկ Մաշտոցին համար, առաջնորդ առնելով Կոնիբիրի ուսումնասիրութիւնը, կը յիշատակէ Մտթ. ԺԱ. 25–30 համարներուն